

ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԻՊԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց ինքնության ամենաէական հատկանիշներից է մեր մշակույթի, այսպես ասած, պատմական ուղղվածությունը՝ ամեն ինչի խորը ներթափանցվածությունը պատմությամբ։ Անցյալի հեղինակները, երբ գրիշ են վերցրել իրենց ձեռքը, կարծես ինքնաբերաբար սկզբից գրել են վերնագիրը՝ «Հայոց պատմություն»։ Հաճախ այդ գրվածքը չի համապատասխանել իր ընդգրկուն վերնագրին, այլ վերաբերվել է միայն մի կարճ դարաշրջանի, հաճախ էլ այդ վերնագիրը գրվել է հետագալում, ինչը նորից շեշտում է նույն՝ ամեն մի գրվածք որպես պատմություն ընկալելու միտումը։ Հայոց նոր գրականությունն էլ, որոշ շափազանցությամբ, կարելի է ասել, որ պատմավեպերի՝ այսինքն, «հայոց պատմությունների» մի շարան է։ Եվ հայոց հայացքը, զարմանալիորեն, ուղղված է ոչ թե դեպի առաջ, այլ՝ հետ:

Հայկական վիպական բանահյուսությունը ևս պատմական է։ Բացառությամբ ազգածին ավանդության և «Սամանա ծոերի», էպոսների գործող անձինք հիմնականում պատմական կերպարներ են՝ Արտաշիայան և Արշակունի արքայատոհմերի արքաներ, Մամիկոնյան տոհմի իշխաններ և այլն։ Երբ դեռ չկա գիրը և գրավոր պատմությունը, ժողովուրդն իր պատմությունը գրանցում է այսպես ասած, էպիկական կողավորման միջոցով։ Այդպիսիք են «ազգածին ավանդությունը» և «Վիպասանքը»։ Բայց դպրության ի հայտ գալուց հետո էլ ժողովուրդը շարունակել է ստեղծել էպոսներ, որոնցով ներկայացվել են պատմական դարաշրջանները։ Եվ հայկական միտքը փորձել է կողավորել երկրի ողջ պատմությունը իրար հաջորդող էպոսների և էպիկական շարքերի միջոցով։

Հայկական վիպական բանահյուսությունը վերին աստիճանի հարուստ է, բաղկացած մի շարք խոշոր էպոսներից և բազում փոքր ստեղծագործություններից¹։ Մրանց պետք է գումարել նաև հայոց քրիստոնեական դարձի մասին

¹ Հայ վիպական բանահյուսության համակարգման վերաբերյալ տե՛ս Մ. Արենյան, Երկեր, Հ. Ա., Եր., 1966; A. Y. Petrosyan, “The Indo-European and Ancient Near Eastern Sources of the Armenian Epic”, *Journal of Indo-European Studies Monograph* № 42. Washington DC, 2002; A. E. Петросян, Армянский эпос и мифология, Ер., 2002: Հին էպոսների ակտուալ բնագրերը տե՛ս հղված միջնադարյան հեղինակների երկերում, դրանց կապակցված շարադրանքը՝ Ս. Հարությունյան, Հին հայոց վիպաշխարհը, Եր., 1987, Սասունի էպոսի բնագրերը՝ «Սամանա ծոեր», հին. I-IV, Եր., 1948-1999: Քյոռողլու հայկական ամենասամբռոշական տարբերակը տե՛ս Քյոռ-օղլի, ժողովրդական վիպասանություն. Եր., 1941, հայրուկի երգերը՝ Ա. Ղազիյան, Հայ ժողովրդական ուսումնական դարձի մասին,

պատմող «Եկեղեցական էպոսը» և վանական բանահյուսության այլ ստեղծագործություններ, որոնք սովորաբար չեն դիտվում այս համատեքստում:

Ներկա հոդվածում կքննարկվեն հետևյալ վիպական ստեղծագործությունները.

1) Ազգածին ավանդություն, ավանդված Խորենացու և Սեբեռսի մոտ (Հնայած Երբեմն «առասպել» կոչմանը, դա տիպիկ հերոսական էպոս է, մյուսների համեմատությամբ՝ առավել բնիկ տարրերով)²,

2) «Վիպասանք» (Երվանդյան և Արտաշիսյան դարաշրջանի մասին պատմող վիպական զրուցյներ, ավանդված Խորենացու մոտ),

3) «Պարսից պատերազմ»՝ էպիկական պատմություններ Արշակունյաց Հայաստանի վերջին շրջանի մասին, արձանագրված Ազգաթանգեղոսի, Փակստու Բյուզանդի, Խորենացու, Սեբեռսի և Հովհանն Մամիկոնյանի գրքերում,

4) «Տարոնի պատերազմը»՝ Տարոն նահանգի վիպական պատմությունը, որը կազմում է Հովհանն Մամիկոնյանի «Տարոնի պատմության» մի գգալի մասը,

5) «Սասնա ծոեր» (Երբեմն գլխավոր հերոսի անունով կոչվում է «Սասնացի Դավիթ»)՝ հայոց ժողովրդական մեծ էպոսը, արձանագրված առաջին անգամ XIX դարում, սակայն կողմնակի աղբյուրներից հայտնի XII դարից,

6) «Քյոռողլի»՝ թյուրքական ցեղերի գերիշխանության դարաշրջանի թյուրքական էպոս, որը մտել է հայերի և այլ ժողովուրդների ավանդություններ, քրդեր, պարսիկներ և այլն),

7) հայդուկի Երգեր՝ Օսմանյան լծի դեմ պայքարող հերոսների մասին,

8) էպիկական ստեղծագործություններ խորհրդացին ղեկավարների մասին:

Կարելի է ասել, որ այդ ստեղծագործություններում «էպիկական կողով» գրանցվել է երկրի և ժողովրդի ողջ պատմությունը: Ազգածին ավանդությունները սկսվում են բարեկոնյան աշտարակաշինությունից, այսինքն՝ ժողովուրդների առաջացման ժամանակից, և ավարտվում հայերի պարտությամբ ասորեստանյան թագուհի Շամիրամից (մ.թ.ա. IX դարի վերջ), որը հայկական ա-

1989, էջ 100-175. խորհրդային առաջնորդների վերաբերյալ էպիկական ստեղծագործությունների վերաբերյալ՝ Հ. Մելետիսան, Լենինը և Ստալինը հայկական ֆոլկլորում, Եր., 1941:

² «Հերոսական էպոսը ծավալովում է Երմիկական կրնասլիդացիայի գործընթացում, զարգանում և տարածվում էրնոգենեզի (ազգագոյացման – Ա. Պ.) և ցեղերի տեղաշարժման ընթացքում, այդ պատճառով էլ այն ավելի հիշ է քափանցիկ միջազգային ազդեցության համար», տե՛ս Ե. Մ. Մելետիսկի, Վեծենիւ և историческую поэоса и романа, Մ., с. 62: Ազգածին ավանդության հնդեւրոպական ակունքների վերաբերյալ տե՛ս Տ. Ահյան, 1982. “Les débuts de l’histoire d’Arménie et les trois fonctions indo-européennes”, *Revue de l’histoire des religions* CIC-3, p. 251-271; G. Dumézil, *Le roman des jumeaux*, Paris, 1994, p. 133-134; A. Petrosyan, “The Indo-European *H₂ner(t)-s and the Danu Tribe”, *Journal of Indo-European Studies*, Vol. 35 (2007), p. 297-310; **Idem**, “Forefather Hayk in the Light of Comparative Mythology”, *Journal of Indo-European Studies*, 37 (2009), p. 155-163:

վանդուկթում անձնավորում է Ուրարտու պետությունը (նրան են վերագրվում Ուրարտուի նշանակալի կառուցցների, այդ թվում՝ մայրաքաղաք Վանի, Մենուա արքայի ջրանցքի կառուցումը, ուրարտական սեպագիր արձանագրությունները և այլն): Ուրարտուի տիրապետությունը՝ մ.թ.ա. IX-VII դդ., այսպիսով, համարվում է ասորեստանյան գերիշխանության դարաշրջան: «Վիպասանքը» հետուրարտական դարաշրջանի էպոս է՝ նրա առաջին նշանակալի հերոսը՝ Տիգրան Երվանդյանը թվագրվում է մ.թ.ա. VI, իսկ վերջինները՝ Արտաշեսը և Արտավագդը՝ մ.թ.ա. II-I դարերով: «Պարսից պատերազմը» պատմում է Արշակունիների դարաշրջանի (I-V դդ.) հատկապես վերջին շրջանի, իսկ «Տարոնի պատերազմը»՝ հետարշակունյաց դարաշրջանի Տարոն նահանգի տերերի՝ հիմնականում Մամիկոնյան իշխանների պարսիկների գեմ ունեցած պատերազմների մասին: «Սասնա ծռերը» ընդգրկում է արաբական տիրապետության և հետագա ժամանակահատվածը (VII-XIII դդ.): Այդ էպոսների հերոսներից շատերը, ինչպես ասվեց, պատմական գեմքեր են (օրինակ, Տիգրանը, Արտաշեսը, Արտավագդը, Տիրանը, Արշակը հին և միջնադարյան Հայաստանի թագավորներ են): Զնայած ակնհայտ պատմականացմանը, հատկապես թշնամիների կերպարներում պարզորոշ լսվում են հին առասպելների արձագանքներ (Այսպես, Հայկի հակառակորդ Բելլ Բաբելոնի մեծ աստված Բել-Մարդուկն է, Արամի հակառակորդ Բարշամը՝ սիրիական Բաալշամին աստվածը, Տիգրանի հակառակորդ Աժդահակը՝ իրանական առասպելական օձ-վիշապ Աժի Դահական):

Այս ստեղծագործությունների սյուժեները քիչ ընդհանրություններ ունեն (նրանք արտացոլում են տարբեր դարաշարջանների պատմական իրականությունը): Սակայն, համեմատությունը բացահայտում է նրանց բոլորին բնորոշ մի սխեմա, որը կարող է պարզեցվել որպես որոշակի կերպարների հաջորդականություն:

1) Աստվածություն կամ նրա սիմվոլը,

2) Նրա որդիները՝ երկվորյակներ, որոնցից առաջինը ներկայացնում է ամպրոպի աստծու էպիկական տարբերակը,

3) «մեռնող (և հարություն առնող)» կերպար:

Հնդեվրոպական համատեքստում այդ սխեման կարելի է դիտարկել որպես երկու առասպելների համադրություն՝ 1) աստվածային երկվորյակների երկնային աստծու որդիների առասպելությունը և 2) ամպրոպի աստծու և նրա «պատժվող / զոհվող» որդու առասպելությունը: Ակնհայտ է, որ այս վիպական սխեման ծագում է աստվածային պարագիգմից՝ դիցածնությունից (թեոգոնիա): Դիցաբանական վերակազմության մեջ նախնական սխեման պատկերանում է որպես պարզ ծննդաբանական շարք.

1) Երկնային աստված,

2) Նրա որդիները, երկվորյակներ, որոնցից մեկն ամպրոպի աստվածն է, վիշապամարտիկ,

Յ) ամպրոպի աստծու որդին, «զոհվող» աստվածություն³:

Այս սխեման օգտագործվել է առասպելական արքետիպային կերպարների միջոցով Հայաստանի պատմական դարաշրջանների կողավորման և մողելավորման համար: Պետք է նշել, որ հայկական, ինչպես և որոշ այլ ավանդություններում, ամպրոպի աստվածը հանդես է գալիս որպես երկվորյակային կերպար (դրա վառ օրինակն է, Սանասարը, Սասունի հերոսների հիմնական գենքի՝ «թուր-կեծակիի» առաջին տերը)⁴: Էպիկական տոհմաբանություններում այդ սխեման հաճախ բարդացվում է հանդիպում տոհմագծեր երկու սերունդների երկվորյակներով, հայտնվում է նոր հերոս՝ ամպրոպի աստծու երկրորդ մարմարվորումը, որին է հաջորդում «մեռնող և հառնող» կերպարը:

Տոհմի հիմնագիրը՝ երկվորյակների հայրը, որը հնդեվրոպական վերակազմության մեջ հանդես է գալիս որպես երկնքի (արկի) աստված՝ *dyēus phr̠tter-, շարքում կարող է փոխարինվել իր սիմվոլով («Վիպասանքում» երկվորյակային հերոսների հայրը ցուլն է, իսկ «Սասնա ծոերի» մի տարբերակում ըստ երևութին՝ ձին⁵): Նա, ի դեպ, երբեմն ոչ մի դեր չի խաղում, և տոհմը, ըստ էության, սկսվում է երկվորյակներից: Նրանցից ավելի նշանակալի եղբոր՝ ամպրոպի աստծու կերպարը կրկնվում է շարքի հիմնական հերոսի՝ տոհմի նախավերջին անդամի՝ կերպարում («Սասնա ծոերում»՝ Դավիթ) և, այսպիսով, նախնական սխեման բարդանում է:

Շարքն ավարտվում է վերջին հերոսի վերջով/մահվամբ (հարության հույսով), որից հետո դարաշրջանն ավարտվում է (տեղի են ունենում աղետներ, փոխվում է արքայատոհմը, Հայաստանը կորցնում է անկախությունը և այլն):

Ազգածին նահապետների տոհմաբանությունը կարող է ներկայացվել որպես երկու նմանատիպ շարքերի հաջորդականություն, քանի որ այստեղ կարելի է տեսնել երկվորյակների երկու սերունդների հետքեր (իրար նման անուններով հերոսները՝ Արամանյակ և Արամայիս, Հարմա և Արող, կարող են

³ Երկվորյակների հնդեվրոպական առասպելների վերաբերյալ տե՛ս օրինակ D. Ward, *The Divine Twins: An Indo-European Myth in Germanic Tradition*, Berkeley-Los Angeles; J. P. Mallory, D. Q. Adams, *Encyclopedia of Indo-European Culture*, London-Chicago, p. 161 ff.; M. L. West, *Indo-European Poetry and Myth*, New York, 2007, p. 186 ff.; հնդեվրոպական ամպրոպի աստծու վերաբերյալ՝ Բ. Բ. Իվանով, Բ. Ն. Տոպորով, *Исследования в области славянских древностей*, М.

⁴ Սանասարի՝ որպես ամպրոպի աստծու վիպականացած կերպարի վերաբերյալ տե՛ս Մ. Արենյան, Երկեր, Հ. Ա., էջ 414 համ., Երվանդի վերաբերյալ՝ Ս. Հարությունյան, Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 103 համ.: Ի դեպ, ամպրոպի աստվածը հանդես է գալիս որպես երկվորյակային կերպար նաև որոշ այլ ավանդություններում՝ այդպիսիք են հին հնդկական հնդրան, և խոտիական թեշուրը և շումերական հշկուրը (տե՛ս A. Y. Petrosyan, *The Indo-European and Ancient Near Eastern Sources of the Armenian Epic*, 14 f., 20 ff.; A. E. Петросян, “Армяно-индийские эпические параллели”, *Армянский эпос и мировое эпическое наследие*, Еր., 2007, с. 38-46).

⁵ Ս. Հարությունյան, Հայ առասպելաբանություն, էջ 349-350:

հանգեցվել նախնական երկվորյակներին): Սակայն, այս երկու շարքերը կարող են պարզեցվել մեկի՝ 1) Հայկ՝ դիցաբանական կերպար, որը սպանում է Բաբելոնի բռնակալ թելին և հիմնադրում Հայաստանը, 2) Արամանյակ և Արամայիս, որոնցից երկրորդը կառուցում է Արմավիրը՝ Հայաստանի առաջին մայրաքաղաքը, [...] 3) Արամ, գլխավոր հերոս, ուազմիկ, 4) Արա Գեղեցիկ, որը սպանվում է ճակատամարտում, բայց հավատում էին, որ նա վերակենդանացել է առասպելական արալեզների՝ շան նման արարածների միջոցով: Կարելի է ասել, որ սա հին հայկական դիցածնության առավել մոտ վիպական տարբերակն է, որտեղ որոշ կերպարներ պահպանել են աստվածային հատկանիշներ (Հայկի անունով է կոչվում Օրիոն համաստեղությունը, Արայի անունով՝ մի աստղ կամ մոլորակ):

Հայ հնագույն թագավորների ծննդաբանությունը «Վիպասանքում» կարող է ներկայացվել որպես երկու նմանատիպ հաջորդական շարք: Ստորև ներկայացվում է դրանցից միայն երկրորդը. 1) արքայական տոհմի մի կին և ցուլ, աստծու սիմվոլը, 2) երվանդ արքա (երվանդաշատ մայրաքաղաքի հիմնադիր) և նրա եղբայր, գլխավոր քուրմ երվագ⁶, 3) Արտաշես, մեծ արքա, 5) Արտավազդ արքա, որը շղթայված է Մասիս լեռան քարանձավում և ձգտում է դուրս գալ այնտեղից:

«Պարսից պատերազմը» և «Տարոնի պատերազմը» գրական ստեղծագործություններ են, որոնցում նշված ծննդաբանական շարքը բացահայտ չի դրսելորվում: Բայց, այնուամենայնիվ, պարզորոշ նկատվում են հին վիպական ավանդույթի և կերպարների հետքերը: Այսպես, «Պարսից պատերազմում» Մուշեղ սպարապետի դիակը դնում են մի բարձր տեղ, որպեսզի առասպելական արալեզները նրան լիզելով վերակենդանացնեն, ինչպես Արային (Փափառու V, 36): «Տարոնի պատերազմում» Գիսանե և Դեմետր եղբայրները՝ Տարոնի էպոնիմների նախնիները, աստվածային երկվորյակների ակնհայտ վիպական տարբերակներն են: Նրանք հիմնում են Վիշապ քաղաքը Տարոնում (Մուշի շրջանում), վիշապաքաղ Վահագնի պաշտամունքի կենտրոնում: Գիսանեն ինքը նույնացվում է այդ աստծու և նրա քրիստոնեական հաջորդի՝ սուրբ Կարապետի հետ (Հովհաննես Մկրտիչ): Հատկանշական է, որ վերջինիս երկրպագում էին սուրբ Աթանագինեսի հետ և պատկերացնում որպես «այր մի գիսաւոր ընդ ամպս որոտացեալ», այսինքն, նա էլ կարող է համարվել երկվորյակային կերպար, ընդ որում, ինչպես և մյուս հայկական ավանդույթի «ավագ» երկվորյակները, ծագած ամպրոպի աստծուց⁷:

«Մասնա ծոերում» ծննդաբանական շարքը ներկայացված է այսպես. 1)

⁶ Երվանդի և Երվազի՝ որպես երկվորյակների մասին տե՛ս Ա. Հարությունյան, Հայ առասպելաբանություն, էջ 103 հιտն.:

⁷ Ա. Հարությունյան, Հայ առասպելաբանություն, էջ 124 հιտն.:

Ծովինար՝ ամպրոպի դիցուհի, որի անունը հենց նշանակում է «կայծակ, փայլակ», 2) Սանասար (ամպրոպի աստծու կերպարը) և Բաղդասար, Սասուն քաղաքի հիմնադիրներ, 3) Մեծ Մհեր, 4) Դավիթ, էպոսի հիմնական հերոսը, ամպրոպի աստծու երկրորդ մարմնավորումը, 5) Փոքր Մհեր, երկրորդ մարմնավորումն իր պապ Մեծ Մհերի, «մեռնող և հառնող» կերպար, որը մտնում է ժայռի մեջ և դուրս կգա այն ժամանակ, երբ աշխարհը կդառնա առատ և արդար: Շարքն ունի այդ տեսքը էպոսի ստանդարտ տարրերակներում, բայց գրանցված են երկվորյակների երկու սերունդներով, մեկ Մհերով, առանց Դավիթի կամ երկու Դավիթներով տարրերակներ:

Այս էպոսներում աստվածայինը և մարդկայինը հանդես են գալիս տարբեր համամասնություններով ինչքան արխահիկ է էպոսը, այնքան շատ է աստվածայինը: Ազգածին լեզենդների Հայկը և Արան, ինչպես ասվեց, հնագույն աստվածների անուններ կամ մականուններ են, Արամը՝ նույնպես: Տիգրանի որդի Վահագնը նախաքրիստոնեական աստված է (< պարթևական *Varhragna, հմմտ. ավեստ. *Vərəθθrayna*), իսկ «Սասնա ծռերում» Մհերը նախաքրիստոնեական Միհր աստծու անվան մի տարրերակն է:

Այս սխեմայի հետքեր կարելի է գտնել թագավորների և մեծ իշխանների լեզենդար տոհմաբանությունների մեջ («տոհմական վեպ»), որտեղ տոհմի հիմնադիրները հաճախ հանդես են գալիս որպես համահունչ անուններով եղբայրներ կամ երկվորյակներ: Այսպես, Արծրունի և Գնունի տոհմերը ծագեցվում են Սանասարից և նրա եղբորից, Բագրատունիները՝ Հայկի սերունդ Բագամ և Բագարատ եղբայրներից, հայ Արշակունիները՝ պարթևների Արշակ արքայի Վաղարշակ եղբորից (առասպելական անձ), Մամիկոնյանները՝ շինական թագաժառանգներ Մամիկ և Կոնակ առասպելական եղբայրներից:

Այժմ ավելի ուշ շրջանի ստեղծագործությունների մասին: «Քյոռողլիում» («Կուրի որդի», XVI-XVII դարերի սահմանի պատմական անձ, ջալալիների ապստամբության առաջնորդներից), չկա տարբեր սերունդների հերթագայություն: Սա թյուրքական էպոս է, բայց նրա գործողությունները տեղի են ունենում Հայկական լեռնաշխարհում և այն ներառել է իր մեջ հայկական մոտիվներ: «Կուրի որդի» այուժեն ծագում է «Պարսից պատերազմից», ըստ որի, Տիրան թագավորին՝ Արշակ թագավորի հորը, կուրացնում է Վարագ-նապուհը (Փավստոս III, 20-21): «Քյոռողլին» ներառում է Արշակի լեզենդի առանցքային տարրերը՝ հորը կուրացնելը, պայմանավորված ձիու հետ կապված մի թյուրիմացությամբ և հերոսի վրեժը⁸: Կան բազմաթիվ համապատասխանություններ «Քյոռողլու» և «Սասնա ծռերի», միջև՝ օրինակ, Քյոռողլու թու-

⁸ A. Y. Petrosyan, *The Indo-European and Ancient Near Eastern Sources of the Armenian Epic*, p. 43 ff.

⁹ Կ. Մելիք-Օհանջանյան, «Տիրան-Տրդատի վեպը ըստ Փավստոս Բուզանդի», *Տեղեկագիր*, 1947, № 7, էջ 59-77.

րը պատրաստվում է կայծակից (հմմտ. Սասունի հերոսների Թուր-կեծակին), նրա կախարդական ձին, ինչպես և Սասունի հերոսների ձին, ծովալին ծագում ունի, Քյոռողլոր ընկերները կոշվում են «գալի»՝ «խենթ», ինչպես «Սասնա ծոերի» հերոսները և այլն: Որոշ տարբերակներում, կյանքի ավարտին Քյոռողլին մտնում է քարանձավ, հմմտ. Փոքր Մհերի և Արտավազդի վերջը: Արշակ թագավորը ևս շղթայվում և նետվում է Անհուշ բերդը, որտեղ և ավարտվում է նրա կյանքը: Այսպիսով, Քյոռողլին, կարելի է ասել, շարունակում է Հայաստանի էպիկական ավանդույթը¹⁰:

Եվ զարմանալի չէ, որ եթե արևելահայերի մեջ Քյոռողլին հանդես է գալիս որպես թյուրքական հերոս, ապա Արևմտյան Հայաստանի հարավային շրջաններում նա ներկայացվում է որպես հայ, Արշամ (և ոչ Խովշան) անունով, ծագումով Վանի շրջանի Անկշտան գյուղից (ինչպես որ պարսիկների մեջ Քյոռողլին պարսիկ է, քրդերի մեջ՝ քուրդ, օսմանցիների մեջ՝ օսմանցի): Այս տարբերակները հագեցած են հայկական բանահյուսությամբ և կենցաղով և այնքան են հեռացած թյուրքականներից, որ իրենցից ներկայացնում են «Սասնա ծոերը» հիշեցնող մի նոր հայկական էպոս¹¹:

Հայդուկի երգերում ևս չկա հերոսների սերունդների հաջորդականություն: Հայդուկները կոշվում էին մուսուլմանական-արաբական ֆիդայի տերմինով (նաև՝ ֆիդա, ֆեդա, ֆեդային «զոհ»՝ նրանք երդվում էին զոհվել հայրենիքի համար): Երգերում հայդուկի մահվան օրը կոշվում է տոն, զատիկ՝ Քրիստոսի հարության տոնի անունով, և նա պետք է հարություն առնի և հասնի անմահության՝ «երկնային փառքի», «փառքի պսակի»: Գերեզմանից ելնելու, հարություն առնելու կոչը երգերի ամենահաճախ հանդիպող մոտիվներից է: Հայդուկների մշտական կոչումը՝ «առյուծ» և շամուսնանալու երգումը հիշեցնում են էպոսի Մհերներին (հմմտ. Մեծ Մհերի «առյուծ» կոշումը և անզավակ Փոքր Մհերի կերպարը): Արևմտյան Հայաստանի ազատագրման ողբերգական պատերազմը ճակատագրական կերպով կենտրոնացված էր Սասունում և հարակից շրջաններում, որտեղ մեծ հայդուկ Անդրանիկի մասին պատմել են «Սասնա ծոերի» դրվագները հիշեցնող պատմություններ (նա, իբր, մարմնի վրա խաչ է ունեցել, ամեն կովից հետո լողացել և նոր ուժեր է ստացել և այլն): Այսպիսով, հայդուկի երգերը շարունակում են էպոսի վերջին հերոսի՝ մեռնող և հառնող կերպարի ավանդույթը¹²:

¹⁰ «Քյոռողլու» հայկական տարբերակների և հայկական կապերի վերաբերյալ տե՛ս Խ. Սամվելյան, «Նախարան», Քյոռ-օղլի, ժողովրդական էպոս, էջ 5-23, Ա. Արայան, «Քյոռողլի», Հայկական սովորական հանրագիտարան, հ. 12, էջ 465, A. Y. Petrosyan, *The Indo-European and Ancient Near Eastern Sources of the Armenian Epic*, p. 157-158, Ա. Թամազյան, «Քյոռողլի», Իրան-նամե, 1998, № 1-2-3, էջ 72-85.

¹¹ Խ. Սամվելյան, «Նախարան», Քյոռ-օղլի, ժողովրդական էպոս, էջ 18-20:

¹² Ա. Պետրոսյան, «Ֆիդայու կերպարը հայ բանահյուսության մեջ», Ավանդականը և արդիականը հայ մշակույթում, Հայ ժողովրդական մշակույթ XV, Եր., 2010, էջ 447-453:

Խորհրդային Հայաստանի առաջին տասնամյակներին հասարակ մարդկանց, ժողովրդական երգիչների և պրոֆեսիոնալ բանաստեղծների կողմից ստեղծվել են բազմաթիվ էպիկական ստեղծագործություններ՝ երգեր, բանաստեղծություններ և պոեմներ խորհրդային ղեկավարների, մասնավորապես Լենինի և Ստալինի մասին։ Այդ ժողովրդական (կամ «կեղծ ժողովրդական») ստեղծագործություններն այն ժամանակվա գիտության մեջ համարվում էին մեր էպոսի «Հինգերորդ ճյուղը», այսինքն՝ «Սաման ծռերի» շարունակությունը Փոքր Մհերի ճյուղից հետո¹³։ Դրանցում լենինն ու Ստալինը հաճախ են հանդես գալիս որպես հիմնադիր-երկվորյակներ։

Բայց երևում է նաև նշված սխեմային ավելի մոտ հերոսների շարքի ակնարկը՝ Մարքս-Էնգելս, որպես երկվորյակ հիմնադիրներ, լենին, գլխավոր հերոս, որը սպանում է վիշապին՝ ցարին, և Ստալին՝ վերջին հերոս։ Իրոք, Մարքսը և Էնգելսը նախախորհրդային դարաշրջանը խորհրդանշող համաժամանակյա կերպարներ են, մարքսիզմի հիմնադիրներ և ապագայի նախակարապետներ, լենինը՝ ԽՍՀՄ առաջին ղեկավար, իսկ Ստալինը՝ նրա հաջորդը և գործի շարունակողը¹⁴։ Խորհրդային հերալդիկ շարքի պրոֆիլները՝ Մարքս-Էնգելս-Լենին-Ստալին (որտեղ ավագությունը որոշվում է մորուքի խտությամբ և երկարությամբ) և խորհրդային առաջնորդների հույսարկավորությունները դամբարանում ամրապնդվում էին այս առնչությունները (լենինն ու Ստալինը կարող են դիտվել որպես Փոքր Մհերի տիպի ժայռում «քնած հերոսներ», իսկ Ստալինի մարմնի դուրս բերումը դամբարանից համեմատելի է Մհերի՝ ժայռից ելնելու հետ)՝¹⁵։ Ասվածը միստիկական կապերի բացահայտման միտում չունի։

¹³ Այդ մասին առևած Հ. Մելիքյան, լենինը և Ստալինը հայկական փոլկուրում, Եր., 1941, Ա. Պուրապյան, «Լենինի և Ստալինի կերպարները սովորական հայկական երաժշտական ստեղծագործություններում», Տեղեկագիր, 1949. № 10, էջ 111-128. Ա. Պետրոսյան, «Առասպեկտանական մի սխեմայի արտացոլումը հասարակական գիտակցության մեջ», Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Հանրապետական գիտական նախաշրջան, 1984-1985 թթ. ազգաբանական և բանագիտական դաշտային հետազոտությունների արդյունքները, Զեկուցումների հիմնագրություններ, Եր., 1990, էջ 47-50։

¹⁴ Միայն մեկ օրինակ՝ Նախիրի Զարյանի «Ստալին» բանաստեղծության մեջ Մարքսին և էնդեմին միասին հատկացված է մեկ տող, իսկ լենինին և Ստալինին՝ հաջորդ առանձին տողեր։ Մարքսը և Էնգելսը ներկայացված են է մեկական, լենինը՝ երկու, Ստալինը՝ երեք մակդիրով։ Այս անձինք միավորվում են որպես «հաննարի արեգնափայլ շորորդությունը տիտան»։

¹⁵ Փոքր Մհերի և եվրոպական «Բնած հերոսների» կապի վերաբերյալ առևած Ա. Ե. Պետրոսյան, “Влияние армянского Мгера на европейских героев”, Вестник Матенадарана, т. 20 (2014), с. 169-174, լենինի վերաբերյալ՝ Сержей Королев, “Бессмертие властителя. Ленин как сказочный персонаж”, http://sergeikorolev.sitemcity.ru/ltext_1602035726.phtml?p_ident=ltext_1602035726.p_1106163203։ Լենինի և Ստալինի մասին խորհրդային Միտրյան տարբեր ժողովուրդների կողմից հսկայական բանակությամբ բանահյուսական և մերձբանահյուսական ստեղծագործություններ են ստեղծվել։ Խորհրդային պաշտոնական գաղափարախոսությունն ինքը ուներ վերին աստիճանի արխարկ հատկանիշներ, համարելի հնագույն առասպեկտների հետ։ Այսպես, Ստալինի սովո-

Հասկանալի է, որ այս տիպի համընկնումները պատահական բնույթ են կրում, բայց և այնպես, դրանք կարող էին ուեզոնանսի մեջ մտնել հին, արքետիպային սխեմայի հետ:

Սակայն Ստալինի «անձի պաշտամունքի» դատապարտումը և խորհրդային իրականության զարգացումները թույլ չտվեցին ձևավորվելու այդ վերջին «էպոսը»: Խրուշչովի դարաշրջանը դարձավ խորհրդային հերոսական էպիկայի ավարտը՝ հրատապ դարձավ բանահյուսության մեկ այլ ժանր՝ անեկդոտը: Դրանց հիմնական թիրախը հՅՀՄ ընթացիկ դեկավարներն էին, բայց լենինը և Ստալինը շարունակում էին մնալ կարեռը կերպարներ (կա, օրինակ, լենինի մասին ուշ հայկական անեկդոտների շարք): Հազվագեալ հանդես էին գալիս նաև Մարքսը և Էնգելսը:

Այսպիսով, հայ ժողովուրդը էպոսներով կոդավորել է հայոց պատմությունը սկսած ժողովրդի ծագումից մինչև XX դարի կեսը: «Սասնա ծոերից» հետո ողջ ծննդաբանական շարքը պարունակող նոր լիարժեք էպոսներ, կարելի է ասել, շտեղծվեցին և՛ դարաշրջանն էր ուրիշ, և՛ պատմական հանգամանքները թույլ չտվեցին: «Քյոռողին», ամեն գեպքում, փոխառյալ էպոս է, թեև նշանակալի հայկական տարրերով, հայդուկների ազատագրական պայքարի երգերը կամեցվեցին ցեղասպանությամբ և նրանց արգելքով հՅՀՄ-ում, իսկ հՅՀՄ առաջնորդների մասին էպիկական ստեղծագործությունները՝ Ստալինի պաշտամունքի դատապարտմամբ: Բայց եղած նյութը թույլ է տալիս ասելու, որ բոլոր ստեղծագործություններում, որտեղ հնարավոր է եղել, էպիկական պատմությունը փորձ է արվել կերտելու ըստ միևնույն արքետիպային սխեմայի՝ հերոսների ծննդաբանական շարքի:

Ստորև ներկայացվում է այդ շարքի մի պարզեցված աղյուսակ չորս էպոսների համար:

Էպոս	Երկվորյակային տիպի հերոսներ	Մեծ հերոս	Վերջին՝ զոհվող և վերածնվող, կամ փակված հերոս
Ազգածին ավանդություն	Արամանյակ և Արամայիս	Արամ	Արա Գեղեցիկ
«Վիպասանք»	Երվանդ և Երվազ	Արտաշես	Արտավազդ
«Սասնա ծոեր»	Սանասար և Բաղրամասար	Դավիթ	Մհեր
Մարքսիզմի հիմնադիրներ և հՅՀՄ առաջնորդներ	Մարքս և Էնգելս	Լենին	Ստալին

բական մակրիները՝ «արե» և «հայր», հիշեցնում են հնդեվրոպական արևային երկնքի աստծուն՝ *զյես րիշտեր- («լուսավոր երկնք-հայր»), իսկ մյուս մշտական մակրինը՝ «ընկեր» համբնինում է Միտրա աստծու անվան հնդկական իմաստավորմանը: Այդ նոյն աստվածն Իրանում դարձել էր Միտրա և Միհր, արևի աստված, տես Ա. Պետրոսյան, Առապելաբանական մի սխեմայի արտացոլումը հասարակական գիտակցության մեջ:

Հայկական էպոսի ծննդաբանական սխեման, ինչպես տեսանք, լավագույնս մեկնաբանվում է հնդեվրոպական առասպելաբանության տվյալներով: Այս համատեքստում հայկական շարքերի ամենամոտ զուգահեռը Հռոմի լեգենդար արքաների շարքն է (ժորժ Դյումեզիլի մեկնաբանությամբ). 1) Մարս աստված (հմմտ. Հայկ, աստվածային կերպար), 2) Երկվորյակներ Ռեմոս և Ռոմուլոս, Հռոմի հիմնադիրը (հմմտ. Արամանյակ և Արամայիս՝ հիմնադիրը Արմավիրի, Սանասար և Բաղդասար, հիմնադիրները Սասունի), 3) Նումա՝ «միտրայական» արքա (հմմտ. Մեծ Մհեր, որի անունը ծագում է Միթրա-Միհրից), 4) Տուլլոս, ուազմիկ արքա (հմմտ. Արամ և Դավիթ) 5) Անկոս, «միտրայական» նումայի ժառանգ, «երրորդ գործառություն» ներկայացուցիչ (ինչպիսիք են նաև հայկական շարքերի վերջին հերոսները՝ Արան և Փոքր Մհերը)¹⁶:

«Վիպասանքում» էական է իրանական ազդեցությունը: Երվանդի, Երվազի և Արտավազդի առասպելները հիշեցնում են Ֆիրդուսու «Շահնամեի» պատմությունները կուհրասապի, Գուշտասապի և Իսֆանդիյարի մասին: Ինչպես Երվանդը և Երվազը, կուհրասապը և Գուշտասապը ծագում են աստվածային Երկվորյակներից¹⁷ (ընդ որում կուհրասապի հին անունը՝ Արվագածի», համապատասխանում է հայ. Երվանդին՝ «Արագ», իրանական նույն արմատից)¹⁸, իսկ Իսֆանդիյարը, Գուշտասապի որդին, շղթայվում է ինչպես Արտավազդը: Կարելի է ասել, որ «Վիպասանքը» Հայաստանի պատմության իրական դեպքերի և հայկական ու իրանական առասպելների միահյուսման մի հետաքրքիր օրինակ է:

Օսական նարթական էպոսը և «Վիպասանքը» միավորվում են նույն հերոսուհու կերպարով՝ օսական Սաթանան, նարթերի մեծ հերոսուհին, համապատասխանում է «Վիպասանքի» Սաթենիկին, որը ներկայացվում է որպես ալան-ների (օսերի նախնիների) արքայի քույր: Օսական էպոսում հերոսների ծննդաբանությունը ներկայացված է այսպես՝ 1) Ուարիսագ «Գալլ», Երկվորյակների հայրը (հմմտ. Ռեմոսին և Ռոմուլոսին կերակրող հոռմեական էգ գալլի կերպա-

¹⁶ Հոռմեական հին արքաների շարքի վերաբերյալ տես **G. Dumézil**, 1974. *Mythe et épopee. T. I. L'idéologie des trois fonctions dans les épopeées des peuples indo-européens* (2e éd.). Paris, Gallimard. C. 271-284; հայկական հերոսների «Փունկցիոնալ» բնույթը՝ **S. Ahyan**, 1982. *Les débuts de l'histoire d'Arménie et les trois fonctions indo-européennes*; հոռմեական և հայկական երկվորյակների առասպելների առանձնահատուկ համապատասխանությունների վերաբերյալ՝ **G. Dumézil**, 1994. *Le roman des jumeaux*. Paris: C. Gallimard, 133-134 :

¹⁷ Կուհրասապի և Գուշտասապի՝ Երկվորյակներից ծագելու վերաբերյալ, տես **S. Wikander**, «Sur le fonds commun indo-iranien des épopeées de la Perse et de l'Inde,” *La nouvelle Clio: Revue mensuelle de la découverte historique* 1949, № 1-2: 317 seq.

¹⁸ Երվանդ անվան ստուգաբանությունը տես **Հ. Անանյան**, Հայոց անձնանունների բառապան, հ. 2, Եր., Պետական համալսարանի հրատարակություն, 1944, էջ 145:

րը), 2) երկու սերունդների երկվորյակներ՝ Ախսար և Ախսարթագ, Ուրղզմագ և Խամըց, 3) Ուրղզմագ, երկվորյակներից ավելի արժանավորը և նարթերի առաջնորդը, որը, որպես Սամանայի ամուսին, համապատասխանում է Արտաշեսին, Սամանիկի ամուսնուն, 4) Սոսլան, քարից ծնված հերոս, Արտավազդի կրկնակը, որը լավագույնս համապատասխանում է և «Սասնա ծռերի» Փոքր Մհերին¹⁹:

«Վիպասանքի» և օսական էպոսի վրա ակնհայտ է տեղական՝ փոքրասիական-կովկասյան ազդեցությունը: Այսպես, ազգածին ավանդության՝ արաւելքների կողմից վերածնվող Արա Գեղեցիկի փոխարեն հաջորդ էպոսներում վերածնվող հերոսը փակվում է ժայռի մեջ, այդպիսով, նույնանալով ժայռից կամ քարից ծնվող կամ վերածնվող խուռա-ուրարտական և կովկասյան կերպարներին (խուռիական Ուլիկումմի, ուրարտական Խալդի, կովկասյան Սոսրուկո, Սոսլան): Եվ Սոսլանի աղքաղական կրկնակը՝ Սոսրուկոն թաղված է հողում և ամեն գարուն փորձում է գուրու գալ այնտեղից, ինչպես Արտավազդը (ընդ որում, նրա ազատումը, ինչպես և Արտավազդի դեպքում է, կհանգեցնի աշխարհի վերջին):²⁰

«Նահնամեի» հիշյալ շարքը դիտվել է որպես այսպես կոչված «Երկնային արքայության թեմայի» հնդեվրոպական արտահայտություններից մեկը: Բայց թեմայի, աստվածների ներկա սերնդին նախորդել է գերբնական էակների երկու կամ երեք սերունդ: Մանրամասն քննությունը ցույց է տալիս, որ հայկական էպոսներում պահպանվել են նաև այդ թեմայի դրսեւորումները (այսպես, Սանասարը խուռիական ամպրոպի աստծու՝ Թեշուրի մի կրկնակն է, «Վիպասանքում» հանդես է գալիս Աժդահակը՝ «Նահնամեի» Զոհակի իրանական նախատիպը և այլն):²¹

Այսպիսով, այն սխեման, որով հայկական էպոսներում կողավորվել են Հայաստանի պատմության դարաշրջանները, հնդեվրոպական ծագում է են-

¹⁹ Օսական և հոռմեական երկվորյակների առասպեկտերի համեմատությունը տե՛ս **В. И. Абасев**, *Скифо-европейские изоглоссы*, Москва, 1965, с. 86 ևլլ.:

²⁰ Մհերի և Արտավազդի խուռիական, ուրարտական և կովկասյան կապերի վերաբերյալ **A. Y. Petrosyan**, “Haldi and Mithra/Mher”, *Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies*, 2006, 1, p. 222-238; **Ա. Պետրոսյան**, «Հայկական և հյուսիսկովկասյան նարական էպոսների հարաբերություններ», *Հայ ժողովրդական էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը*, Եր., 2012, էջ 8-51:

²¹ Այս թեմայի վերաբերյալ տե՛ս օրինակ **S. C. Littleton**, *The ‘Kingship in Heaven Theme’. Myth and Law Among the Indo-Europeans*, Berkeley-Los Angeles, 1970, p. 83-122; **Idem**, “Is the ‘Kingship in Heaven’ Theme Indo-European?” *Indo-European and Indo-Europeans*, Philadelphia, 1970, p. 383-404; նրա հայկական արտածովները՝ **A. Y. Petrosyan**, *The Indo-European and Ancient Near Eastern Sources of the Armenian Epic*, p. 119-121.

թագրում իսկ էպոսներում ի հայտ են գալիս բնիկ հնդեվրոպական, իրանական և հին տեղական՝ խուռա-ուրարտական տարրեր:

Armen Petrosyan Armenian History and Epic Folklore

When there is no writing and written history, people record their history through epic compositions. But after the emergence of writing, the Armenian mind continued developing epics presenting historical eras. It might be said that the whole history of Armenia was codified through successive epics. In this article the following epic compositions are considered: 1) Ethnogonic legends; 2) “Vipasank”; 3) “War of Persia”; 4) “War of Taron”; 5) “Daredevils of Sasun”; 6) Kyoroghli; 7) Haiduk songs, and 8) Poems about the Soviet leaders.

Almost all of them were created according to the uniform scheme – a genealogical line of archetypal heroes: 1) a divine image or its symbol; 2) divine twins, and 3) “dying (and rising) hero”. The historic kings and heroes of the epics were superposed on these mythological archetypes. The scheme is of native Indo-European origin, which later incorporated some local non-Indo-European and Iranian elements.